

Բ. Կերակրոյ սեղանոց վրայ կը հանգ-
 չին նաեւ զանազան «ծաղկակալ սկտեղք»
 (Խոր. 142), որոնք զլխաւոր զարդը կը
 կազմեն՝ թէ Յունաց (Բրս. Արբ.) եւ թէ
 Հայոց մէջ. պարագայ մը՝ զոր կը հաս-
 տատէ Ագաթանգեղոս եւս, այլաբանօրէն
 ըսելով մարդկային մտաց համար՝ թէ «ծա-
 ղիկը լինին՝ զի սկտեղս պատուականս թա-
 գաւորին ելանիցեն» (485): Հայ տիկնայք
 ունէին յատուկ «բուրաստանք ծաղկոցաց»
 (Եղիշ. 174), զորս կը խնամէին մեծ հո-
 գածութեամբ, հարկաւ անոցմէ հայթհայ-
 թելով սեղանի փնջերն ալ: Մեր պատ-
 մահօր եւս ծանօթ էր «ծաղկոցաց եւ հոտա-
 րանաց կազմութիւն» մ'Երուանդակերտի
 տներուն շուրջ (Խոր. 119): Եւ Աշոտ
 արքայ առանձին սէր մ'ունէր «ի բու-
 րաստանս» (Յհ. Կթղ. 176): Արդ՝ եթէ
 ուշադրութեամբ նայինք սեղանի սկտեղաց,
 անոնց մէջ տարւոյն եղանակին համեմատ
 պիտի կարենանք որոշել իրենց զունով ու
 բուրով՝ մեր նախնեաց ծանօթ ծաղկները.
 «վարդն եւ շուշանն եւ ասպազան եւ յաս-
 միկն, անխարն եւ սմնակն, ներգիսն եւ
 շամպղիտակն եւ մեղրուկն, հօրօտն եւ մու-
 րօտն եւ մանիշակն, եւ այլն ամենայն
 համասպրամն ծաղկանցն» (Ագթ. 480):
 Ասոցմէ ոմանք ծանօթ են նաեւ Միս. Գոշի